ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՒԹԱՖՅԱՆ ԱՆԻ ԱԼԵՔՍԱՆԻ

# ԿԵՂԾԵՎ ՇԻՆԾՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք՝
քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն),
միջազգային մասնավոր, ընտանեկան,
աշխատանքային, սոցիալական
ապահովության իրավունք»
մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2019

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МУТАФЯН АНИ АЛЕКСАНОВНА

# ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ НЕДЕЙСТВИТЕЛЬНОСТИ МНИМЫХ И ПРИТВОРНЫХ СДЕЛОК В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности
12.00.03 – “Частное право – гражданское, торговое (коммерческое); международное
частное, семейное, трудовое право, право социального обеспечения”

ЕРЕВАН - 2019

**Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում**

| | |
|---|---|
| **Գիտական ղեկավար՝** | իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Գ. Հ. Բեքմեզյան** |
| **Պաշտոնական ընդդիմախոսներ՝** | իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Տ. Կ. Բարսեղյան** |
| | իրավաբանական գիտությունների թեկնածու **Ա.Ա. Թավադյան** |
| **Առաջատար կազմակերպություն՝** | **Հայ-ռուսական համալսարան** |

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թվականի հունիսի 24-ին, ժամը $14^{30}$-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան - 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2019 թվականի մայիսի 8-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ իրավ.գիտ.թեկ. Տ.Հ.Սուջյան**

**Тема диссертации утверждена в Ереванском государственном университете**

| | |
|---|---|
| **Научный руководитель:** | кандидат юридических наук, доцент **Г. О. Бекмезян** |
| **Официальные оппоненты:** | доктор юридических наук, профессор **Т. К. Барсегян** |
| | кандидат юридических наук **А. А. Тавадян** |
| **Ведущая организация:** | **Российско-Армянский университет** |

Защита диссертации состоится 24-ого июня 2019 г. в $14^{30}$ часов на заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (Ереван - 0025, Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 8-ого мая 2019 г.

**Ученый секретарь специализированного совета:**
**кандидат юрид. наук** **Т. О. Суджян**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Կեղծ և շինծու գործարքների հիմքում ընկած է մարդկային պահանջմունքը՝ ստանալ ավելին, քան օրենքն է թույլատրում: Դա է պատճառը, որ այս գործարքները մասնավոր գույքային իրավահարաբերությունների զարգացման մշտական ուղեկիցն են: Ծուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց կեղծ և շինծու գործարքների թիվը մեծանում է, իսկ իրավական սխեման ավելի բարդանում և կատարելագործվում՝ հաճախ անհնարին դարձնելով դրանց ապացուցումը: Դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում նկատվում է նաև կեղծ և շինծու գործարքների՝ որպես իրավական մեխանիզմի չարաշահման այլ միտում ևս: Քաղաքացիական շրջանառության անբարեխիղճ մասնակիցներն իրականում վավեր գործարքը շահարկում են որպես կեղծ կամ շինծու: Նման չարաշահումների դեմ պայքարը ներկայումս բավականին դժվարությունների է բախվում: Մեր կարծիքով, ստեղծված իրողության պատճառներից է ինչպես կեղծ և շինծու գործարքների վերաբերյալ համապարփակ ուսումնասիրությունների, այնպես էլ նշված գործարքների կնքումը կանխելու և արդեն իսկ կնքված գործարքների դեմ պայքարելու արդյունավետ իրավական մեխանիզմների բացակայությունը: Մասնավորապես՝ կեղծ և շինծու գործարքների վերաբերյալ հստակ պատկերացումների բացակայության պատճառով ձևավորվել է հակասական իրավական պրակտիկա, իսկ նշված գործարքների անվավերությունը կարգավորող օրենսդրության ոչ լիարժեք և անորոշ լինելը հանգեցրել նրան, որ բավականին հաճախ դատարանները չեն կարողանում գործարքի կեղծ կամ շին-

ծու լինելու վերաբերյալ հանգել միանշանակ հետևության՝ չունենալով այս գործարքների առկայության մասին վկայող հստակ օրենսդրական ուղենիշներ: ՀՀ վճռաբեկ դատարանը նախադեպային որոշումներով փորձել է նշված խնդիրներին լուծումներ տալ, սակայն դրանք կրում են հատվածական բնույթ: Կեղծ և շինծու գործարքների իրավակարգավորման բազմաթիվ հարցեր մնացել են իրավական անորոշության դաշտում: Բացի այդ, քաղաքացիական իրավահարաբերությունների անբարեխիղճ մասնակիցների համար ստեղծվում են ամենաթողության պայմաններ` չնախատեսելով նման գործարքների կնքումը կանխող որևէ կառուցակարգ և հանգեցնելով դրանց քանակական աճին: Կարծում ենք, այդ է հիմնական պատճառներից մեկը, որ դատական գործերի ծանրակշիռ մասը կազմում են այն գործերը, որոնցում անվավերության հետևանքների կիրառման պահանջ են ներկայացնում հենց իրենք` կեղծ և շինծու գործարքների կողմերը: Մինչդեռ այս ինստիտուտը, մեր համոզմամբ, կոչված է առաջին հերթին և մեծամասամբ պաշտպանելու գործարքի մասնակից չհանդիսացող անձանց (այսուհետև` երրորդ անձինք), պետության և համայնքների իրավունքներն ու օրինական շահերը: Երբեմն դատական պրակտիկայում կեղծ և շինծու են որակվում այն գործարքները, որոնք այլ բնույթ ունեն և ենթադրում են այլ իրավական հետևանքների կիրառում: ՀՀ քաղ. օր.-ով ոչ միայն առաջնահերթություն չի տրվել երրորդ անձանց իրավունքների պաշտպանությանը, չի սահմանափակվել կողմերի` անվավերության հետևանքների կիրառման պահանջ ներկայացնելու իրավունքը, այլ նաև ամբողջությամբ չեն նախանշվել այս գործարքների հատկանիշները, չի ամրագրվել այս գործարքների բնույթին համապատասխանող անվավերության հետևանքների կիրառման կառուցակարգ: Ուստի, մեր կարծիքով, առկա է անհետաձգելի անհրաժեշտություն՝ խորապես ուսումնասիրելու կեղծ և շինծու գործարքների ինստիտու-

տը, վեր հանելու առկա խնդիրները, մշակելու դրանց լուծման հնարավոր ուղիներ:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտն են կեղծ և շինծու գործարքների կնքման ու անվավերության հետ կապված իրավահարաբերությունները, առարկան են կեղծ և շինծու գործարքները ու նրանց իրավական կարգավորման հիմնախնդիրները:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակը կեղծ և շինծու գործարքների իրավակարգավորման տեսական և գործնական հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրությունն է, ՀՀ օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:Խնդիր է դրվել.

- բացահայտել գործարքը կեղծ կամ շինծու որակելու համար անհրաժեշտ հատկանիշները, պարզել այս գործարքների իրավական էությունը,անվավերության տեսակը,
- ուսումնասիրել հարակից ինստիտուտներից կեղծ և շինծու գործարքների տարբերակման առանձնահատկությունները,
- համապարփակ ուսումնասիրել և ամբողջական վերլուծության ենթարկել կեղծ և շինծու գործարքների անվավերության հետևանքների կիրառման կառուցակարգը, այդ թվում`
  - ➢ բացահայտել կեղծ և շինծու գործարքների անվավերության հետևանքների կիրառման մեջ իրավական շահի առանձնահատկությունները,
  - ➢ քննարկել կեղծ և շինծու գործարքների անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ ներկայացնելու կողմերի իրավունքի սահմանափակման հիմնահարցը,
  - ➢ վեր հանել կեղծ և շինծու գործարքների անվավերության իրավական հետևանքների առանձնահատկությունները,
  - ➢ մշակել երրորդ անձանց իրավունքների պաշտպանության առաջնահերթությունն ապահովող կառուցակարգ:

**Հետազոտության թեմայի մշակվածության**

**աստիճանը և տեսական հիմքը:** Կեղծ և շինծու գործարքների վերաբերյալ տեսական խորը և համակողմանի ուսումնասիրություն հայկական իրականության մեջ բացակայում է: Այս գործարքներին որոշ չափով անդրադարձ է կատարվել Տ. Կ. Բարսեղյանի աշխատությունում և Կ.Վ.Համբարձումյանի թեկնածուական ատենախոսությունում, սակայն այդ աշխատանքները կեղծ և շինծու գործարքների համապարփակ ուսումնասիրություն չեն և հպանցիկ անդրադառնում են այս գործարքներին:Այլ երկրների տեսաբանների կողմից ևս նշված գործարքների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները բավականին քիչ են: Թերևս, որպես կեղծ և շինծու գործարքների համապարփակ ուսումնասիրություն, կարելի է նշել մեկ մենագրություն՝ հրապարակված Օքսֆորդի համալսարանի կողմից և մեկ թեկնածուական ատենախոսություն՝ պաշտպանված ՌԴ-ում: Ատենախոսի կողմից հետազոտության են ենթարկվել արտասահմանյան հեղինակների աշխատությունները: Կարելի է առանձնացնել Էդվին Սիմփսոնի և Միրանդա Սթյուարթի, Լուիզա Անտոնիոլլու և Աննա Վենեցիայի, Մո Չժան Լեյդենի, Վիկտոր Տուրոնի, Հուսթո Փ.Թորրեսի, Պատրիսիա Լեմփրիվի, Դանիիլ Տուզովի և այլոց աշխատությունները:

**Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը:** Ուսումնասիրվել են ՀՀ և մի շարք այլ երկրների օրենքներ, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի և ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների բազմաթիվ դատական ակտեր, այլ պետությունների դատարանների որոշումներ ու մեկնաբանություններ:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը:** Հետազոտության ընթացքում կիրառվել են ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական և այլ մեթոդներ:

**Հետազոտության գիտական նորույթը:** Աշխատանքը հայկական իրավագիտության մեջ կեղծ և շինծու գործարքների անվավերութ-

յան տեսագործնական խնդիրների առաջին խորը և համապարփակ հետազոտությունն է: Առաջին անգամ ձևակերպվել են կեղծ և շինծու գործարքների էության ու հատկանիշներն ամբողջապես արտահայտող նոր հասկացություններ, որոնք կոչված են վերացնելու այս գործարքների իրավաբանական որակման գործընթացում ծագող խնդիրները: Նախատեսվել են շինծու գործարքի՝ գործնականում լայնորեն տարածված նոր տեսակներ՝ սահմանելով բնորոշումները: Մշակվել է շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառման նոր կառուցակարգ: Կեղծ և շինծու գործարքների քանակի նվազեցման նպատակով՝ նախատեսվել է կեղծ և շինծու գործարքներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքների կիրառման պահանջ ներկայացնելու կողմերի իրավունքը սահմանափակող կառուցակարգ, լրացուցիչ պաշտպանության են ենթարկվել երրորդ անձանց իրավունքները: Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում, եզրակացության մեջ ամփոփված մտահանգումներում ու առաջարկներում:

**Պաշտպանության ներկայացվող դրույթները.**

**1.** Մեր կարծիքով, գործարքը կեղծ որակելու համար բավարար չէ միայն առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված լինելը, իսկ գործարքը շինծու որակելու համար՝ այլ գործարք քողարկելու նպատակով կնքված լինելը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քաղ. օր.) 306-րդ հոդված): Իրավական որոշիչ նշանակություն պետք է ստանա կեղծ կամ շինծու գործարք կնքելու նպատակը: Կեղծ և շինծու գործարքների անթույլատրելիությունը սահմանելու նպատակն է առաջին հերթին ապահովել երրորդ անձանց կամ հանրային շահերի պաշտպանությունը, իսկ նշված շահերին սպառնացող վտանգի մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ այս գործարքները կնքված լինեն ՀՀ օրենսդ-

րության հակասող (հակաիրավական) որևէ նպատակով: Ուստի, մեր կարծիքով, *կեղծ և շինծու գործարքներն իրական գործարքից տարբերակելու հիմնական հատկանիշ է որոշակի քողարկված արդյունքի հասնելու նպատակի առկայությունը, որը, որպես կանոն, արտահայտվում է որոշակի հակաիրավական բնույթի առավելություններ ստանալու, օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ շրջանցելու կամ դրանցից խուսափելու մտադրությամբ*: Հիմք ընդունելով կեղծ և շինծու գործարքներում նպատակի որոշիչ իրավական նշանակությունը՝ առաջարկում ենք այն ամրագրել ՀՀ քաղ.օր.-ի 306-րդ հոդվածով (օրենսդրական ձևակերպումները ներկայացված են եզրակացության 16-րդ կետում):

**2.**Գտնում ենք, որ *գործարքի մասնակից չհանդիսացող անձանց, պետության և համայնքների իրավունքներն ու օրինական շահերը կարող են խախտվել իրական կողմին քողարկելու նպատակով կնքված երկու տիպի գործարքով՝ գործարք, որում իրական կողմին քողարկելու նպատակ հետապնդել են գործարքի երկու կողմերն էլ, և գործարք, որում իրական կողմին քողարկելու նպատակը հետապնդել է միայն գործարքի մի կողմը*: Ընդ որում, եթե առաջին գործարքի դեպքում երրորդ անձը կարող է շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջ ներկայացնել, ապա երկրորդ գործարքի դեպքում նման հնարավորություն ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման ուժով առկա չէ: Ուստի, առաջարկում ենք ՀՀ քաղ.օր.-ի 306-րդ հոդվածում բացառության կարգով, որպես շինծու գործարքի տեսակ, ամրագրել *իրական կողմի քողարկման նպատակով կնքված գործարքը, որում կողմին քողարկելու մտադրություն ունեցել է միայն մեկ կողմը և որով այդ կողմը նպատակ է հետապնդել՝ ստանալու հակաիրավական բնույթի որոշակի առավելություններ, շրջանցելու որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ: Միաժամանակ առաջարկում ենք նախատեսել իրավունքի պաշտպանության լրա-*

*ցուցիչ հնարավորություն գործարքի մյուս կողմի՝ բարեխիղճ կողմի համար: Մասնավորապես՝ վերջինիս պետք է տրվի իրավունք՝ գործարքի մյուս՝ անբարեխիղճ կողմից ստանալու անվավերության հետևանքների կիրառման արդյունքում պատճառված վնասի հատուցում* (օրենսդրական ձևակերպումը ներկայացված է եզրակացության 16-րդ կետում):

**3.**Ուսումնասիրելով գործարքը կեղծ կամ շինծու ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ ներկայացնելու կողմերի իրավունքի սահմանափակման հարցը և հիմնավորելով սահմանափակման անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք նշված հարցի լուծման հետևյալ մոտեցումները.

*ա) Ցանկացած դեպքում կողմի պահանջով գործարքը կեղծ կամ շինծու ճանաչելիս և անվավերության հետևանքներ կիրառելիս դատարանը պետք է պարզի բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների խախտման հնարավորությունը: Միայն այդպիսի հնարավորությունը բացառելուց հետո պետք է կիրառվեն նման հետևանքներ:*

*բ) Բոլոր այն դեպքերում, երբ կեղծ կամ շինծու գործարք կնքելու ՀՀ օրենսդրության հակասող (հակաիրավական) նպատակն իրագործված է, ապա այդ գործարքի անվավերության վերաբերյալ կողմի հայտարարությանը չպետք է տրվի իրավական նշանակություն:*

*գ) Իրականում վավեր գործարքը դատական կարգով կեղծ կամ շինծու դարձնելու հնարավորությունը բացառելու, ինչպես նաև նման գործարքի կողմին նույն գործարքից տուժած բարեխիղճ անձանց հետ պաշտպանության հավասար հարթակին չդնելու նպատակներով՝ առաջարկում ենք նաև, որպես կողմերի նկատմամբ կիրառվելիք սահմանափակում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով գործարքի կողմերի համար սահմանել պարտականություն՝ գործարքի կեղծ կամ շինծու բնույթն ապացուցելու համար ներկայացնելու գործարքի*

*կնքման պահին ստեղծված գրավոր ապացույցներ* (օրենսդրական ձևակերպումները ներկայացված են եզրակացության 16-րդ կետում):

**4.**Ուսումնասիրելով կեղծ և շինծու գործարքների անվավերության իրավական հետևանքների առանձնահատկությունները՝ առաջարկում ենք, *որպես կեղծ և շինծու գործարքների անվավերության իրավաբանական հետևանքներ, առանձնացնել նախևառաջ կնքված գործարքի առաջացրած իրավաբանական-ձևական հետևանքների վերացումը, այնուհետև՝ ռեստիտուցիան և որպես լրացուցիչ հետևանք՝ կեղծ կամ շինծու գործարքի կնքման հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասը հատուցելու պարտականությունը:*

**5.**Անդրադառնալով շինծու գործարքների դեպքում շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության եղանակներին՝ *գտնում ենք, որ անձին պետք է իրավունք տրվի իր իրավունքների պաշտպանությունն իրականացնել ՝ինչպես միայն շինծու գործարքի անվավերության ընդհանուր հետևանքների կիրառման պահանջ ներկայացնելով, այնպես էլ իր հայեցողությամբ վերջինիս հետ մեկտեղ քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառման պահանջ ներկայացնելով:*

Գործարքը շինծու ճանաչելիս դատարանի կողմից քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառման պարտադիրության հարցը քննարկելով և ուսումնասիրելով ձևավորված իրավակիրառ պրակտիկան՝ գտնում ենք, որ

*ա) Եթե դատարանի կողմից մրցակցության սկզբունքի պահպանմամբ քողարկված գործարքին վերաբերող պայմանները քննարկման առարկա չեն դառնում, մինչդեռ շահագրգիռ անձն ապացուցել է կողմերի միջև իրականում այլ իրավահարաբերությունների առկայությունը և դրանով իսկ կնքված գործարքի շինծու լինելը, ապա պետք է կիրառվեն միայն շինծու գործարքի անվավերության ընդհանուր հետևանքները:*

*բ)Բոլոր այն դեպքերում, երբ անկախ կողմի*

*ներկայացրած պահանջից, դատարանում քննարկման առարկա են դարձել քողարկված գործարքի պայմանները, ապա դատարանը պետք է վճռի եզրափակիչ մասում արտացոլի կողմերի միջև կնքված քողարկված գործարքի առկայությունը՝ արձանագրելով նաև գործարքի բոլոր էական պայմանները:*

*գ) Եթե դատարանի կողմից քողարկված գործարքի բոլոր էական պայմանները պարզված չեն, ապա դատարանը պետք է հաստատի կողմերի միջև համապատասխան այլ իրավահարաբերությունների առկայությունը, ինչը, որպես նախադատելի փաստ, հնարավորություն կտա կողմերին նոր քաղաքացիական գործի շրջանակներում իրականացնելու իրենց իրավունքների պաշտպանությունը, այսինքն՝ ապացուցելու քողարկված գործարքի վավերականությունը, իսկ այնուհետև բոլոր էական պայմանների առկայությունը՝ դրանից բխող հետևանքներով* (օրենսդրական ձևակերպումը ներկայացված է եզրակացության 16-րդ կետում):

**6.** Կարևորելով երրորդ անձանց իրավունքների պաշտպանության առաջնահերթությունը`գտնում ենք.

*ա) Երբ կեղծ կամ շինծու գործարքի անվավերության հետևանքներ կիրառելիս ռեստիտուցիա կիրառել հնարավոր չէ կամ ռեստիտուցիայի կիրառումը չի հանգեցնի երրորդ անձանց խախտված իրավունքների լիարժեք վերականգնման, ապա երրորդ անձանց համար պետք է սահմանվի իրավունք՝ ներկայացնելու կեղծ կամ շինծու գործարքի կնքման հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջ:*

*բ) Կեղծ և շինծու գործարքները պետք է դիտարկվեն որպես վավեր գործարքներ, եթե երրորդ անձինք բարեխղճորեն հիմք են ընդունել այդ գործարքները: Ուստի, գործարքի կեղծ կամ շինծու բնույթը որպես պաշտպանություն չի կարող օգտագործվել գործարքի կողմերի, նրանց իրավահաջորդների և նրանց պարտատերերի կողմից երրորդ անձանց դեմ, ովքեր բարեխղճորեն իրավունքներ են*

*ձեռք բերել առերևույթ սեփականատիրոջից:*

*գ) Բարեխիղճ երրորդ անձանց իրավունքներին պետք է առաջնայնություն տրվի ոչ միայն այն դեպքում, երբ վերջիններս առերևույթ սեփականատիրոջից բարեխղճորեն գույք և իրավունքներ են ձեռք բերում, այլ նաև այն դեպքում, երբ երրորդ անձինք հանդիսանում են առերևույթ սեփականատիրոջ պարտատերեր, և նրանց պահանջով բռնագանձում է տարածվում կեղծ կամ շինծու գործարքով փոխանցված գույքի նկատմամբ:*

*դ) Երբ գործարքի կեղծ կամ շինծու լինելու պայմաններում նույն գույքի նկատմամբ հավակնություն ունեն ինչպես իրավունքը փոխանցած, այնպես էլ իրավունքը ստացած անձանց պարտատերերը, առաջնայնություն պետք է տրվի այն պարտատերերին, որոնց պահանջի հիմքն առաջացել է ավելի վաղ* (օրենսդրական ձևակերպումները ներկայացված են եզրակացության 16-րդ կետում):

**7.** Կեղծ, շինծու և կասկածելի գործարքների հարաբերակցության խնդրի համատեքստում անդրադառնալով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված դրույթին՝ կարծում ենք.

*ա) «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի հիման վրա կառավարչի կողմից պարտապանի կնքած գործարքի և այդ գործարքի շուկայական գնի տարբերությունը պետք է վերադարձվի պարզեցված կարգով, այսինքն՝ անհրաժեշտ չէ ապացուցել գործարքի կեղծ կամ շինծու բնույթը, հետևապես նաև պարտավորությունների կատարումից խուսափելու նպատակի առկայությունը:*

*բ) «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով կառավարչին պետք է իրավունք տրվի պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում դիմել և դատական կարգով հետ ստանալ ոչ թե պատճառված վնասը, այլ գույքի, ծառայության, աշխատանքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրությամբ դրա շուկայական արժեքի տարբերությունը:*

*գ) Նպատակահարմար է □Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված պահանջի իրավունքը կառավարչին վերապահել այն դեպքում, երբ գործարքի գնի և շուկայական արժեքի տարբերությունն էական է: Ընդ որում, իրավական որոշակիություն ապահովելու նպատակով՝ «էական տարբերություն» հասկացությունն առաջարկում ենք արտահայտել որոշակի տոկոսային հարաբերակցությամբ:*

*դ) Միաժամանակ առաջարկում ենք կառավարչին իրավունք վերապահել վերադարձնելու գործարքի գնի և շուկայական արժեքի էական համարվող տարբերությունը ոչ թե ամբողջությամբ, այլ որոշակի մասով (կրկին տոկոսային հարաբերակցությամբ արտահայտված)՝ նման եղանակով փորձելով նվազագույն չափով ապահովագրել այն կողմին, ով իրականում գործարքը բարեխղճորեն է կնքել* (օրենսդրական ձևակերպումը ներկայացված է եզրակացության 9-րդ կետում):

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:** Հետազոտության տեսական նշանակությունը նրանում է, որ այն կեղծ և շինծու գործարքների վերաբերյալ համակողմանի աշխատություն է, որը կարող է հիմք դառնալ գիտական հետազոտությունների համար և օգտագործվել ուսումնական դասընթացներում: Գործնական նշանակությունը նրանում է, որ ներկայացված առաջարկները և եզրահանգումները կարող են կյանքի կոչվել օրենսդրական մակարդակով և իրավակիրառ պրակտիկայում, ինչը կնպաստի ՀՀ օրենսդրության կատարելագործմանը և օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հեղինակը քննարկումներ է ունեցել նաև ՀՀ դատավորների, նրանց օգնականների, փաստաբանների, նոտարների, հարկային ծառայողների և այլոց հետ: Նա հանդես է եկել գիտական ելույթներով, որոնք արտացոլվել են տպագրված հոդվածներում: Հետազոտության արդ-

յունքների փորձարկման մասին են վկայում «Նպատակի» իրավական նշանակությունը շինծու գործարքում» վերտառությամբ հոդվածի հրապարակումից հետո (2016թ.) թիվ ԵԱԴԴ/1557/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2018թ. ապրիլի 7-ի որոշմամբ արտահայտված դիրքորոշումները, որոնք նույնանում են հեղինակի կողմից հոդվածում արտահայտված տեսակետների հետ:

**Ատենախոսության կառուցվածքը**: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 11 պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** ներկայացվել են թեմայի արդիականությունը, հետազոտության մշակվածության աստիճանը, տեսական հիմքը, օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, իրավական, փորձառական, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

**«Կեղծ և շինծու գործարքների իրավաբանական որակման հիմնախնդիրը»** վերտառությունը կրող **1-ին գլուխը** բաղկացած է հինգ պարագրաֆից:

**«Կեղծ և շինծու գործարքների հասկացությունը»** վերտառությամբ 1.1 պարագրաֆում ուսումնասիրվել են կեղծ և շինծու գործարքների օրենսդրական բնորոշումները, բացահայտվել գործարքի կեղծ կամ շինծու բնույթի մասին վկայող հանգամանքները, տարբերիչ առանձնահատկությունները, անդրադարձ է կատարվել քողարկող և քողարկված գործարքներին, շինծու գործարքների տեսակներին:

**«Նպատակի իրավական նշանակությունը կեղծ և շինծու գործարքներում»** վերտառությամբ 1.1.1 պարագրաֆում տարբերակվել և վերլուծության են ենթարկվել կեղծ և շինծու

գործարքների նպատակները ու այս գործարքները կնքելու նպատակները:

**«Կամքի և կամահայտնության առանձնահատկությունները կեղծ և շինծու գործարքներում»** վերտառությամբ 1.2 պարագրաֆում հեղինակը վերլուծել է այս գործարքներում առկա կամքի արատը, երկու կողմերի մոտ խաթարված կամքի պարտադիր առկայության և գործարքը երկու կողմերի դիտավորությամբ կնքելու հարցերը:

**«Կեղծ և շինծու գործարքների իրավական էությունը»** վերտառությամբ 1.3 պարագրաֆում կատարվել է կեղծ և շինծու գործարքների իրավաբանական բնույթի հանգամանալից վերլուծություն անվավեր գործարքների էության համատեքստում:

**«Կեղծ և շինծու գործարքների անվավերության տեսակը»** վերտառությամբ 1.4 պարագրաֆում հետազոտվել է ՀՀ քաղ. օր.-ով առոչինչ և վիճահարույց գործարքների տարբերակման համակարգում այս գործարքներն առոչինչ գործարքների շարքը դասելու խնդիրը:

**«Կեղծ և շինծու գործարքների տարբերակումը հարակից իրավական ինստիտուտներից»** վերտառությունը կրող **2-րդ գլուխը** բաղկացած է երկու պարագրաֆից:

**«Կեղծ կամ շինծու և կասկածելի գործարքների հարաբերակցության խնդիրը սնանկության վարույթի շրջանակներում»** վերնագրով 2.1 պարագրաֆում հեղինակը բացահայտել է կասկածելի գործարքների էությունը, կատարել կեղծ, շինծու և կասկածելի գործարքների համեմատական վերլուծություն, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված հիմքով պարտապանի գույքը համալրելու հարցի հանգամանալից ուսումնասիրություն:

**«Իրական կողմի քողարկման նպատակով կնքված շինծու գործարքի տարբերակման առանձնահատկությունները»** վերտառությամբ 2.2 պարագրաֆում ուսումնասիրվել է իրականում ոչ այն ստորագրած անձանց միջև կնքված շինծու գործարքը՝ անդրադառնալով

այդ գործարքը հարակից ինստիտուտներից տարբերակելու անհրաժեշտության հարցին: Ուսումնասիրվել են նաև այն գործարքները, որում կողմին քողարկելու նպատակ են հետապնդում միայն գործարքի մեկ կողմում հանդես եկող մասնակիցները:

**«Կեղծ և շինծու գործարքների անվավերության հետևանքների կիրառումը»** վերտառությունը կրող **3-րդ գլուխը** բաղկացած է չորս պարագրաֆից:

**«Իրավական շահը՝ որպես կեղծ և շինծու գործարքներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ ներկայացնելու անհրաժեշտ պայման»** վերտառությամբ 3.1 պարագրաֆում բացահայտվել են այս գործարքների անվավերության հետևանքների կիրառման մեջ իրավական շահի առկայության մասին վկայող ուղենշային չափանիշները, կողմնակից լինելով իրավական շահի լայն մեկնաբանությանը՝ առաջ է քաշվել իրավական շահի բովանդակությունը որոշակիորեն սահմանափակելու հարցը:

**«Կեղծ և շինծու գործարքներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ ներկայացնելու կողմերի իրավունքի սահմանափակման հիմնահարցը»** վերտառությամբ 3.2 պարագրաֆում հեղինակն ուսումնասիրել է այն հարցերը, թե որքանով է բարեխղճությունը և քաղաքացիական իրավունքների չարաշահման արգելքի սկզբունքին համապատասխանում կեղծ և շինծու գործարքի կողմերին գործարքի մասնակից չհանդիսացող սուբյեկտների հետ հավասար հիմունքներով անվավերության հետևանքների կիրառման պահանջ ներկայացնելու իրավունք վերապահելը, և արդյոք դա չի խթանում այս գործարքների կնքումը:

**«Կեղծ և շինծու գործարքների անվավերության հետևանքների առանձնահատկությունները»** վերտառությամբ 3.3 պարագրաֆում հեղինակը գործարքների անվավերության հետևանքների համատեքստում բացահայտել է կեղծ և շինծու գործարքների անվավերության հետևանքները, ուսումնասիրել շինծու

գործարքով քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառման հարցը:

**«Երրորդ անձանց իրավունքների պաշտպանության առաջնահերթության հարցը»** վերտառությամբ 3.4 պարագրաֆում հեղինակը քննարկել է կեղծ և շինծու գործարքների մասնակից չհանդիսացող սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ կառուցակարգեր ներդնելու հարցը:

**Եզրակացությունում**, ի լրումն պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթների, կատարվել են մի շարք ընդհանրացումներ և առաջարկություններ, որոնցից առավել կարևորները հանգում են հետևյալին.

1. Գործարքի կեղծ կամ շինծու լինելը բացահայտելու համար չի կարող հիմք ընդունվել միայն գործարքի իրավական առումով կատարված կամ չկատարված լինելու հանգամանքը: Կողմերի իրական մտադրությունը բացահայտելու համար պետք է, ի թիվս այլնի, որոշիչ նշանակություն տալ գործարքի կողմերի միջև առկա փաստացի դրությանը. արդյո՞ք կողմերի միջև առկա փաստացի հարաբերությունները փոփոխվել են գործարքին համապատասխան, արդյո՞ք գործարքից բխող հետևանքները հասել են տրամաբանական ավարտին:

2. Կեղծ գործարքի առկայության մասին հետևության հանգելու համար ուշադրության են արժանի, մասնավորապես, գործարքի առարկա գույքի գտնվելու վայրը, վճարման փաստը հաստատող ապացույցները, գործարքի կողմերի միջև առկա ազգակցական կամ կախվածության հարաբերությունները, մի քանի կազմակերպություններում գործարքները կնքած նույն անձի կողմից մի քանի պաշտոնների համատեղումը, նույն անձանց մասնակցությունը տվյալ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում, գործարքի մասնակցի գույքի նկատմամբ հարուցված կատարողական վարույթի առկայությունը, գործարքի տնտեսապես անշահավետ կամ անարդյունավետ լինելը, գործարքով ստանձնած պարտավորությունների կատարման համար

անհրաժեշտ միջոցների բացակայությունը:

**3.**Ծինծու գործարքի դեպքում քողարկող և քողարկված գործարքների որոշակի պայմաններ պարտադիր համընկնում են: Մեր կարծիքով, եթե կնքվում է շինծու գործարքների ամբողջական շղթա, ապա սկզբնական և վերջնական կողմերը պետք է համընկնեն:

**4.**Պարզել ենք, որ իրավակիրառ պրակտիկայում ձևավորվել է շինծու գործարքի երեք տեսակ` այլ գործարք քողարկող, գործարքի որևէ պայման քողարկող և գործարքի իրական կողմին քողարկող շինծու գործարքներ:

**5.**Գործարքը կեղծ կամ շինծու որակելու համար անհրաժեշտ է կեղծ կամ շինծու գործարք կնքելու և այդ գործարքը չկատարելու ընդհանուր կամքի առկայությունը բոլոր կողմերի մոտ: Գործարքը շինծու որակելու համար անհրաժեշտ է նաև այլ գործարք քողարկելու ընդհանուր կամքի առկայությունը:

**6.**Գտնում ենք, որ կեղծ և շինծու գործարքների` իրավախախտում չլինելու հանգամանքը բացառում է այս գործարքների կնքման հետևանքով գործարքի մասնակից չհանդիսացող սուբյեկտներին պատճառված վնասի հատուցման հնարավորությունը: Մինչդեռ կարծում ենք, որ նշված սուբյեկտների համար պետք է նախատեսվի գործարքների կնքման հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավունքը:

**7.**Պարզել ենք, որ կեղծ և շինծու գործարքներն այն անվավեր գործարքներն են, որոնք գտնվում են առոչինչ և վիճահարույց գործարքների միջանկյալ օղակում: Առաջարկել ենք այս գործարքները դասել վիճահարույց գործարքների շարքը` որպես բացարձակ վիճահարույց գործարքներ:

**8.**«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված փոխանցումների հիմքում ընկած գործարքներն անվանելով «կասկածելի»` հետևություն ենք արել, որ կեղծ, շինծու և կասկածելի գործարքները չեն կարող նույնանալ: Այդ գործարքներին օրենսդիրը վերագրել է մի շարք օբյեկտիվ հատկանիշներ, որոնք վկայում են նրանց

կասկածելի բնույթի մասին, և դրանց առկա-
յությունը կառավարչին հնարավորություն
է տալիս պարզեցված կարգով սնանկության
վարույթ վերադարձնել պարտապանի գույքը՝
առանց ապացուցելու գույք «փախցնելու»
կամ պարտատերերի շահերին վնասելու նպա-
տակի առկայությունը: Գտնում ենք, որ եթե
նման նպատակի ապացուցման պարտականութ-
յուն սահմանվի կասկածելի գործարքների
դեպքում, ապա դա կհանգեցնի կեղծ, շինծու և
կասկածելի գործարքների միջև առկա
սկզբունքային տարբերության վերացման:

**9.**Առաջարկել ենք «Սնանկության մասին» ՀՀ
օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը ձևա-
կերպել հետևյալ կերպ՝ համապատասխան տո-
կոսային ցուցանիշները դիտարկելով որ-
պես պայմանական թվեր. *«Կառավարիչը կարող
է պարտապանին սնանկ ճանաչելու մա-
սին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց
հետո՝ մեկ տարվա ընթացքում, դիմել և դատա-
կան կարգով հետ ստանալ՝ (...) դ) պարտապանին
սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա
ընթացքում կատարված գործարքներով իրաց-
ված գույքի, մատուցված ծառայության կամ
կատարված աշխատանքի արժեքի և գործարքի
կատարման պահի դրությամբ դրա շուկայա-
կան արժեքի էական տարբերության 60%-ը, բացա-
ռությամբ եթե գործարքը կնքվել է հրապարա-
կային սակարկության հիման վրա: Գույքի,
ծառայության, աշխատանքի իրացման արժեքի
և գործարքի կատարման պահի դրությամբ դրա
շուկայական արժեքի տարբերությունը հա-
մարվում է էական, եթե գերազանցում է շու-
կայական արժեքի նվազագույնը 20%-ը □:*

**10.** Գտնում ենք, որ եթե գործարքը ստորագ-
րել է ոչ իրական կողմը, սակայն կողմերը
նպատակ չեն հետապնդել՝ ստանալու առավե-
լություններ, շրջանցելու օրենսդրական
արգելքներ կամ սահմանափակումներ, ապա չի
կարող բարձրացվել գործարքի շինծու լինե-
լու հարցը: Երբեմն շինծու գործարքի ինստի-
տուտը սխալմամբ կիրառվում է կոմիսիայի,
նվիրատվության հարաբերությունների
նկատմամբ, անգամ վստահության հարաբե-

րությունների նկատմամբ:

**11.** Գտնում ենք, որ շահագրգիռ անձը պարտավոր չէ ապացուցել հենց կեղծ կամ շինծու գործարքի կնքման հետևանքով իր իրավունքների ու օրինական շահերի խախտման փաստը, բավարար է ապացուցել, որ անվավերության հետևանքների կիրառումը կազմում է իր իրավական շահը:

**12.** ՀՀ քաղ.օր.-ով կողմերին այլ անձանց հետ հավասար հիմունքներով իրենց իսկ կնքած կեղծ կամ շինծու գործարքներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ ներկայացնելու իրավունք տրամադրելը չի համապատասխանում բարեխղճությանը, խթանում է նման գործարքների կնքումը, հանգեցնում քաղաքացիական շրջանառության կայունության խախտման:

**13.** Շինծու գործարքի անվավերության հետևանքներն առաջարկել ենք բաժանել երկու խմբի՝ շինծու գործարքի անվավերության ընդհանուր հետևանքների և շինծու գործարքի անվավերության հատուկ կամ լրացուցիչ հետևանքի:

**14.** Պարզել ենք, որ գործարքը շինծու ճանաչելիս ոչ միշտ է հնարավոր բացահայտել քողարկված գործարքի բոլոր էական պայմանները, ուստի կիրառել քողարկված գործարքին վերաբերող կանոնները: Նշվածը ներկայումս պետք է հանգեցնի շինծու գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մերժման անգամ այն դեպքում, երբ գործարքի շինծու բնույթն ապացուցված է, մասնավորապես՝ երբ հաստատված է կողմերի միջև իրականում այլ իրավահարաբերությունների առկայության փաստը, սակայն քողարկված գործարքն ամբողջությամբ բացահայտված չէ: Առաջարկել ենք քողարկված գործարքին վերաբերող կանոնների պարտադիր կիրառման պահանջի փոփոխություն:

**15.** Եթե քողարկված գործարքի էական պայմանների շուրջ համաձայնություն առկա չէ, կիրառելի են անհիմն հարստացման կանոնները: Եթե այն բովանդակությամբ և սուբյեկտային կազմով չի համապատասխանում օրենքի պահանջներին, կիրառելի են անվավերութ-

յան հետևանքները:

**16.** Առաջարկվող լրացումների և փոփոխությունների կատարման արդյունքում ՀՀ քաղ. օր.-ի 306-րդ հոդվածը կունենա հետևյալ տեսքը.

*«1.Կեղծ և շինծու գործարքները դատարանով կարող են անվավեր ճանաչվել ցանկացած շահագրգիռ անձի պահանջով:*

*2.Կեղծ է այն գործարքը, որը գործարքի բոլոր կողմերի դիտավորությամբ կնքվում է առանց տվյալ գործարքից բխող իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության, և որը կնքելով՝ կողմերը կամ կողմը նպատակ են հետապնդում խուսափելու որոշակի իրավական հետևանքներից կամ շրջանցելու որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ կամ ստանալու որոշակի առավելություններ:*

*3.Շինծու է այն գործարքը, որը գործարքի բոլոր կողմերի դիտավորությամբ կնքվում է մեկ այլ գործարք, այդ թվում՝ այլ պայմաններով գործարք, գործարքի որևէ պայման կամ գործարքի իրական կողմին քողարկելու նպատակով, և որը կնքելով՝ կողմերը կամ կողմը նպատակ են հետապնդում խուսափելու որոշակի իրավական հետևանքներից կամ շրջանցելու որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ կամ ստանալու որոշակի առավելություններ:*

*Շինծու է նաև այն գործարքը, որը գործարքի մեկ կողմում հանդես եկող մասնակիցների դիտավորությամբ կնքվում է գործարքի իրական կողմին քողարկելու նպատակով, և որի միջոցով՝ այդ կողմը նպատակ է հետապնդում խուսափելու որոշակի իրավական հետևանքներից կամ շրջանցելու որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ կամ ստանալու որոշակի առավելություններ: Նշված շինծու գործարքի բարեխիղճ կողմն իրավունք ունի մյուս կողմից պահանջելու անվավերության հետևանքների կիրառման արդյունքում պատճառված վնասի հատուցում:*

*4.Շինծու գործարքի դեպքում հաստատվում է կողմերի միջև քողարկված այլ իրավահարա-*

բերությունների առկայությունը, որոնց նկատմամբ կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կիրառվում են քողարկված գործարքին վերաբերող կանոնները: Դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ կիրառել քողարկված գործարքին վերաբերող կանոնները, եթե տվյալ գործով հաստատված փաստերը նման հնարավորություն են տալիս:

5. Գործարքի կեղծ կամ շինծու լինելու վերաբերյալ կողմի հայտարարությունը չունի իրավական նշանակություն, եթե տվյալ գործարքը կնքելու` սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նշված ՀՀ օրենսդրությանը հակասող նպատակն իրականացված է:

6. Կողմը գործարքի կեղծ կամ շինծու լինելը հիմնավորելու համար, ի թիվս այլ ապացույցների, պետք է ներկայացնի գործարքի կնքման պահին ստեղծված գրավոր ապացույցներ:

7. Երրորդ անձն իրավունք ունի պահանջելու իրեն պատճառված վնասի հատուցում կեղծ կամ շինծու գործարքի կողմից, եթե վնասը պատճառվել է կեղծ կամ շինծու գործարքի միջոցով տվյալ կողմի իրականացրած գործողությունների հետևանքով: Եթե հնարավոր չէ պարզել վնասի պատճառման մեջ մեղավոր կողմին, ապա գործարքի կողմերը երրորդ անձի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

8. Գործարքի կեղծ կամ շինծու լինելը որպես պաշտպանություն չի կարող օգտագործվել գործարքի կողմերի, նրանց իրավահաջորդների կամ գործարքով իրավունքը փոխանցող անձի պարտատերերի կողմից երրորդ անձանց դեմ, ովքեր բարեխղճորեն իրավունքներ են ձեռք բերել առերևույթ սեփականատիրոջից, այդ թվում՝ ովքեր բարեխղճորեն գործարքի առարկա գույքի նկատմամբ բռնագանձում են տարածել:

9. Եթե գործարքի կեղծ կամ շինծու լինելու դեպքում գործարքի առարկա գույքի նկատմամբ հավակնություն ունեն ինչպես իրավունքը փոխանցած, այնպես էլ իրավունքը

*ստացած անձանց պարտատերերը, առաջնայնություն պետք է տրվի այն պարտատերերին, որոնց պահանջի հիմքն առաջացել է ավելի վաղ»:*

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1) Մութաֆյան Ա., «Նպատակի» իրավական նշանակությունը շինծու գործարքում» ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, 2016թ., 95-րդ համար, էջեր 46-52:

2) Մութաֆյան Ա., «Ֆիկտիվ և կասկածելի գործարքների հարաբերակցության խնդիրը սնանկության վարույթի շրջանակներում», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2017, մայիս-հունիս, թիվ 5-6 (215-216), էջեր 30-39:

3) Մութաֆյան Ա., «Կեղծ և շինծու գործարքների անվավերության իրավական հետևանքների առանձնահատկությունները», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2017, հուլիս-օգոստոս, թիվ 7-8 (217-218), էջեր 27-38:

4) Մութաֆյան Ա., «Կեղծ և շինծու գործարքների անվավերության հետևանքների կիրառման պահանջ ներկայացնելու կողմերի իրավունքի սահմանափակման հիմնահարցը», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, էջեր 193-207/ Պետություն և իրավունք, Երևան, 2017, թիվ 2-3 (76-77), էջեր 87-96:

5) Մութաֆյան Ա., «Կամքի և կամահայտնության առանձնահատկությունները կեղծ և շինծու գործարքներում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017, էջեր 246-263:

6) Մութաֆյան Ա., «Կեղծ և շինծու գործարքների իրավական էությունը», Պետություն և ի-

րավունք, Երևան, 2017, թիվ 1 (75), էջեր 48-56:

7) Բեքմեզյան Գ., Մութաֆյան Ա., «Իրական կողմի քողարկման նպատակով կնքված գործարքը՝ որպես շինծու գործարքի տեսակ», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2018, նոյեմբեր-դեկտեմբեր, թիվ 11-12 (233-234), էջեր 60-65:

8) Մութաֆյան Ա., «Երրորդ անձանց իրավունքները կեղծ և շինծու գործարքների անվավերության իրավական կարգավորման համատեքստում», Պետություն և իրավունք, Երևան, 2019, թիվ 1 (83), էջեր 89-95:

**Мутафян Ани Алексановна**

## ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ НЕДЕЙСТВИТЕЛЬНОСТИ МНИМЫХ И ПРИТВОРНЫХ СДЕЛОК В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

## РЕЗЮМЕ

В основании мнимых и притворных сделок лежит человеческая потребность - получать больше, чем разрешает закон. По этой причине эти сделки являются постоянным спутником развития частных имущественных правоотношений. Параллельно с развитием рыночных отношений число мнимых и притворных сделок возрастает, а правовая схема все больше усложняется и совершенствуется, часто делая невозможным их доказывание. В настоящее время отмечается также другая тенденция злоупотребления мнимыми и притворными сделками как правовым механизмом. Недобросовестные участники гражданского оборота манипулируют на самом деле действительной сделкой как мнимой или притворной. Многочисленные вопросы правового регулирования мнимых и притворных сделок остались в поле правовой неопределенности. Нередко суды не могут прийти к однозначному выводу о том, что сделка была мнимой или притворной, не имея четких законодательных ориентиров, свидетельствующих о наличии этих сделок. Отсутствуют эффективные правовые механизмы для предотвращения заключения указанных сделок и борьбы с уже заключенными сделками. В результате для недобросовестных субъектов создаются условия вседозволенности, способствуя количественному росту этих сделок. Преобладающая часть судебных дел составляют те дела, в которых требование о применении последствий недействительности предъявляют именно они – стороны мнимых и притворных сделок. Однако этот институт, по нашему убеждению, призван в первую очередь и в большей степени защищать права и законные интересы субъектов, не являющихся участником сделки.

В рамках диссертации автор раскрыл признаки, необходимые для того, чтобы квалифицировать сделку как мнимую или притворную, правовую сущность этих сделок, тип недействительности, изучил особенности различения мнимых и притворных сделок от смежных институтов, обсудил проблему ограничения права сторон предъявлять требование о применении последствий недействительности мнимых и притворных сделок, раскрыл особенности правовых последствий недействительности этих сделок, разработал механизм, обеспечивающий первоочередность защиты прав третьих лиц.

Научная новизна диссертации состоит в том, что она в армянском юриспруденции является первым глубоким и всеобъемлющим исследованием научно-практических проблем недействительности мнимых и притворных сделок. Впервые оформлены новые понятия, полностью выражающие сущность и признаки мнимых и притворных сделок, которые призваны устранить проблемы, возникающие в процессе юридической квалификации этих сделок. Предусмотрены новые виды притворной сделки, широко распространенные на практике, с установлением определений. С целью уменьшения количества мнимых и притворных сделок предусмотрен механизм, ограничивающий

право сторон предъявления требования о признании недействительными мнимых и притворных сделок и применении последствий недействительности, дополнительной защите подвергнуты права третьих лиц. Научная новизна диссертации в первую очередь отражена в представленных на защиту положениях, в обобщенных в заключении теоретических умозаключениях и практических предложениях.

Диссертация имеет не только теоретическое, но и практическое значение, так как представленные предложения и умозаключения могут быть вызваны к жизни на законодательном уровне и в правоприменительной практике, что будет способствовать совершенствованию законодательства РА и обеспечению одинаковому применению закона.

Диссертация подготовлена на кафедре гражданского права ЕГУ. Автор имел обсуждения также с судьями РА, их помощниками, адвокатами, нотариусами, налоговыми служащими и другими. Научные выступления автора отражены в печатанных статьях.

**Mutafyan Ani Aleksan**

**THEORETICAL AND PRACTICAL ISSUES OF INVALIDIYT OF FEIGNED AND SHAM TRANSACTIONS IN THE REPUBLIC OF ARMENIA**

**RESUME**

The basis for feigned and sham transactions is the human requirement which is to get more than the law permits. That is why these transactions are the constant companions for the development of private property relationships. Parallel to the development of market relations, the number of feigned and sham transactions increases, and the legal scheme becomes more complicated and improved often making it impossible to prove them. At present, there is also another tendency of feigned and sham transactions as an abuse of legal mechanism. Non-bona fide participants of civil circulation speculate a really valid transaction as feigned or sham. Numerous issues of legal regulation of feigned and sham transactions have remained in the field of legal uncertainty. The courts are often unable to come to the unequivocal conclusion if the transaction is feigned or sham not having clear legislative guidelines that will prove the existence of these transactions. There are no effective legal mechanisms to prevent the concluding of these transactions and to struggle against the transactions that are already concluded. As a result, conditions of permissiveness are created for non-bona fide subjects contributing to the quantitative growth of these transactions. The heavy part of trials are the cases where the parties of feigned and sham transactions make a demand for the application of invalidity consequences. Whereas, this institute in our opinion is called first and for the most part to protect the rights and legitimate interests of subjects not involved in the transaction.

Within the framework of the dissertation the author has revealed the attributes necessary to qualify the transaction as feigned or sham, the legal essence of these transactions, the type of invalidity, the distinguishing peculiarities of feigned and sham transactions from the adjacent institutions, discussed the issue of limiting the right of parties of feigned and sham transactions that make a demand for the application of the invalidity consequences, revealed the peculiarities of the legal consequences of the invalidity of these transactions, developed a mechanism that ensures the priority of protecting the rights of third parties.

The scientific novelty of the dissertation is that it is the first deep and comprehensive research of the theoretical and practical issues of the invalidity of feigned and sham transactions in Armenian jurisprudence. For the first time new concepts have been formulated that fully express the essence and characteristics of feigned and sham transactions that are called to eliminate the problems arising in the legal qualification process of these transactions. New types of practically wide spread sham transactions have been envisaged by defining the definitions. A new mechanism for applying the consequences of sham transaction was developed. For the purpose of reducing the number of feigned and sham transactions a mechanism limiting the right of the parties to require the application of invalidity consequences considering feigned and sham transactions was envisaged, the rights of third parties were subject to additional protection. The scientific novelty of the dissertation is first of

all reflected in the provisions of the defense, in the theoretical conclusions and practical recommendations that are summarized in the conclusion.

The dissertation has not only theoretical, but also practical significance, as the submitted suggestions and conclusions can be brought to life at the legislative and law enforcement practice, which will contribute to the improvement of the RA legislation and ensuring of the uniform application of the law.

Dissertation was prepared at YSU department of Civil law. The author also had discussions with the judges, their assistants, lawyers, notaries, tax officers and others. He made a series of scientific presentations which were reflected in the printed articles.